ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
4 ապրիլի 2023 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10/1 Ա
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 45 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Տիգրան Ավինյանը, Ստեփան Մաչյանը, Սուրեն Գրիգորյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արամ Դանիելյանը, Սուսաննա Գրիգորյանը, Սաշա Կատվալյանը, Արամ Դանիելյանը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2023 թվականի ապրիլի 4-ի արտահերթ նիստի օրակարգը և ընթացակարգը.

1. Գույքի նվիրատվության մասին:

Լ. Հովհաննիսյանն առաջարկեց «Գույքի նվիրատվության մասին» ավագանու որոշման նախագիծը քննարկել որպես զեկուցվող:

Առաջարկն ընդունվեց:

1. ԼՍԵՑԻՆ - Գույքի նվիրատվության մասին**:**

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Անի Խաչատրյան-Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանը, Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան

Ավինյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Գույքի նվիրատվության մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Սիփան Ասատրյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Սերգեյ Գյոզալյան - Երևան քաղաքի ավագանու անդամ
4. Արման Անտոնյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
5. Աշոտ Սարգսյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2022թ. բյուջեի «Տրանսպորտային համակարգի արդիականացում» ծրագրով ձեռք բերված, 6,637,424,904.00 (վեց միլիարդ վեց հարյուր երեսունյոթ միլիոն չորս հարյուր քսանչորս հազար ինը հարյուր չորս դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 150 հատ Zhongtong bus LCK6860HGN մակնիշի ավտոբուսները և «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի շարժակազմերի ներդրման ֆինանսական աջակցության ծրագիր» ու «Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի շարժակազմի ներդրման ֆինանսական աջակցության դրամաշնորհային ծրագիր» ծրագրերով ձեռք բերված, 12,306,395,162.80 (տասներկու միլիարդ երեք հարյուր վեց միլիոն երեք հարյուր իննսունհինգ հազար հարյուր վաթսուներկու դրամ ութսուն լումա) ՀՀ դրամ արժեքով թվով 87 հատ MAN LION’S CITY 12C մակնիշի ավտոբուսները սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության հետ նվիրատվության պայմանագրերի և հանձնման-ընդունման ակտերի կնքումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 45 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի 2023 թվականի մարտի 17-ի հրաժարականը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 4-րդ մասով՝ Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի՝ Երևանի քաղաքապետի լիազորությունները համարվել են վաղաժամկետ դադարած 2023 թվականի մարտի 17-ից:

Միևնույն ժամանակ ղեկավարվելով «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.3.-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվեց Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրության օրը սահմանել 2023 թվականի ապրիլի 11-ին ժամը 10.00-ին.

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 44 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 39, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 1

Առաջարկը ընդունվեց ձայների մեծամասնությամբ:

ՈՐՈՇՎԵՑ - Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրության օրը սահմանել 2023 թվականի ապրիլի 11-ին ժամը 10.00-ին:

Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը հայտնեց, որ 2023 թվականի ապրիլի 11-ին կայանալիք Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրությանը ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության կողմից քաղաքապետի թեկնածու չի առաջադրվի և ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցությունը չի մասնակցելու Երևանի ավագանու նիստին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կազմեց՝
Ն. Ղուկասյան